# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ 283
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» «10» 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի, մի կողմից, և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրենի պաշտոնակատար՝ Շ. Միրզախանյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մասնակցության ծրագրերի շրջանակներում «Անրի Վեռնոյի (Աշոտ Մալաքյան, 1920-2002 թթ.) 100-ամյակին նվիրված միջազգային համաժողով՝ «Փոքր կինոնկարներ, համընդհանուր ժառանգություն, փոքր կինոթատրոնների պահպանում, հասանելիություն և տարածում գլոբալ պլատֆորմներում» միջոցառման իրականացման ծախսերին՝ համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1735-Ն որոշման, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 1767-Ա/2 հրամանով հաստատված ծրագրի և պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի (Հավելված):

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***2.1. Պատվիրատուն պարտավոր է՝***

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «1168. Արվեստների ծրագրի» «11023. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մասնակցության ծրագրի շրջանակներում աջակցություն Հայաստանում մշակութային ծրագրերին» միջոցառման միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին:

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

**2.2. *Պատվիրատուն իրավունք ունի՝***

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

***2.3. Կատարողը պարտավոր է՝***

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պատվիրատուի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 1.0 (մեկ) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.3.8. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի 3.2-րդ կետով նախատեսված գումարով ձեռք բերել և Պայմանագրի 2.3.3. կետի համաձայն Պատվիրատուին հանձնել համերգի տեսանկարահանված նյութը՝ տեսանկարահանման առաջնային նպատակ սահմանելով արխիվացումը,

**2.4. *Կատարողն իրավունք ունի՝***

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 12416.3 հազար (տասներկու միլիոն չորս հարյուր տասնվեց հազար երեք հարյուր դրամ) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելվածի,

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80%-ը Կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում,

3.3. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ

գատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է ընդունման-հանձնման արձանագրություն,

4.2. Մինչև Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների ընդունման-հանձնման արձանագրության ստորագրումը Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի Պայմանագրի կատարմանն ուղղված՝ իր կողմից փաստացի կատարված ծախսերի վերջնահաշվարկը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պատվիրատուին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2021 թ. նոյեմբերի 30-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2021 թ. դեկտեմբերի 10-ը:

## 7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պատվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

7.2. Մոնիթորինգն իրականացվում է Պատվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

7.4. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

10.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

## 11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 6 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

## 12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ |
| Երևան, Վ. Սարգսյան 3 | ՀՀ, ք Երևան, Տերյան 3ա |
| Կառավարական տուն N 2 | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271 |
| ՀՀ 900011038552, հվհհ 02698732 | |
| Պատվիրատուի ստորագրությունը | Տնօրենի պաշտոնակատար՝ |
| Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ | / Շ. Միրզախանյան |
| Վ. Գասպարյան | Կ.Տ. |
| Կ. Տ. | |

Հավելված
«28» «10» 2021 թ.
N2127-283 պայմանագրի

## Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մասնակցության ծրագրերի շրջանակներում «Անրի Վեռնոյի (Աշոտ Մալաքյան, 1920-2002 թթ.) 100-ամյակին նվիրված միջազգային համաժողով՝ «Փոքր կինոնկարներ, համընդհանուր ժառանգություն, փոքր կինոթատրոնների պահպանում, հասանելիություն և տարածում գլոբալ պլատֆորմներում» միջոցառման իրականացման ծախսերի

| N | Ծախսերի անվանումը | չափման միավոր | քանակ | օր/ ամիս | Միավորի գինը դրամ | Ընդամենը գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Միջոցառման հրավիրված կինոգործիչների ճանապարհածախս, այդ թվում** | | | | | **3949,9** |
| | Ֆրանսիա-Երևան-Ֆրանսիա | մարդ | 3 | | 300000 | 900,0 |
| | Մեծ Բրիտանիա -Երևան-Մեծ Բրիտանիա | մարդ | 1 | | 380000 | 380,0 |
| | Լեհաստան-Երևան-Լեհաստան | մարդ | 1 | | 300000 | 300,0 |
| | Էստոնիա-Երևան-Էստոնիա | մարդ | 1 | | 250000 | 250,0 |
| | Իտալիա-Երևան-Իտալիա | մարդ | 1 | | 250000 | 250,0 |
| | Մոսկվա-Երևան-Մոսկվա | մարդ | 3 | | 182313 | 546,9 |
| | Ուկրաինա-Երևան-Ուկրաինա | մարդ | 1 | | 200000 | 200,0 |
| | Թբիլիսի-Երևան-Թբիլիսի | մարդ | 2 | | 61500 | 123,0 |
| | ԱՄՆ-Երևան-ԱՄՆ | մարդ | 2 | | 500000 | 1000,0 |
| 2 | **Կեցության ծախս (Երևանում)** | | | | | **1500,0** |
| | Հյուրանոցային ծառայություն 15 մարդ 4օր | մարդ/օր | 15 | 4 | 25000 | 1500,0 |
| 3 | **Դահլիճի, սարքավորումների վարձակալության և սպասարկման ծախսեր** | | | | | **2847,0** |
| | Օպերատոր | մարդ | 1 | 3 | 50000 | 150,0 |
| | Լուսանկարիչ | մարդ | 1 | 3 | 19400 | 58,2 |
| | Թարգմանիչ | մարդ | 1 | 3 | 40000 | 120,0 |
| | Սինխրոն թարգմանիչներ 2 մարդ 3 օր 6 ժամ 22000դրամ | մարդ/օր/ժամ | 2 | 3 | 132000 | 792,0 |
| | Բարձրախոսներ 3օր | հատ | 5 | 3 | 5000 | 75,0 |
| | Աուդիոհամակարգ բարձրախոսների համար | հատ | 1 | 3 | 100000 | 300,0 |
| | Ականջակալներ 50 հատ 3 օր | հատ | 50 | 3 | 1500 | 225,0 |
| | Ձայնագրման սարք CD վրա նիստի աշխատանքը ձայնագրելու համար | հատ | 1 | 3 | 24000 | 72,0 |
| | Լազերային թերթիչով պրոեկտոր | հատ | 1 | 3 | 51600 | 154,8 |
| | Սրճի ընդմիջում (100 մարդ 1 անգամ 3 օր) | հատ | 100 | 3 | 1500 | 450,0 |
| | Գիտաժողովի մասնակիցների ճաշի և ընթրիքի ծախս 30 մարդ 3 օր | օր | 30 | 3 | 5000 | 450,0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Տպագրական ծախսեր, այդ թվում՝** | | | | | **1950,0** |
| | դիզայներ | հատ | 1 | | 130000 | 130,0 |
| | խմբագիր | հատ | 1 | | 80000 | 80,0 |
| | բաներ (պաստառ) 1,80սմ*80սմ | հատ | 1 | | 20000 | 20,0 |
| | բուկլետ | հատ | 100 | | 700 | 70,0 |
| | թարգմանիչ անգլերեն | էջ | 80 | | 5000 | 400,0 |
| | միջոցառման գրքի տպագրություն | հատ | 500 | | 2500 | 1250,0 |
| 5 | **Տրանսպորտային ծառայություն** | | | | | **100,0** |
| | մարդատար 3 օր 12 մարդու համար, միկրոավտոբուս՝ 12 տեղանոց՝ 1 հատ | | | | | 100,0 |
| | **Ընդամենը** | | | | | **10346,9** |
| | **ԱԱՀ*** | | | | | **2069,4** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ** | | | | | **12416,3** |

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038552, հվհհ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարպարտականությունները
կատարող՝
**Վ. Գասպարյան**

02698732

«Հայաստանի ազգային
կինոկենտրոն» ՊՈԱԿ
ՀՀ, ք Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար
**Շ. Միրզախանյան**
Կ.Տ.

**Հավելված**
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
«28» «10» 2021 թ.
N 1767 Ա/2 հրամանի

# ԾՐԱԳԻՐ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մասնակցության ծրագրերի շրջանակներում «Անրի Վեռնոյի (Աշոտ Մալաքյան, 1920-2002 թթ.) 100-ամյակին նվիրված միջազգային համաժողով՝ «Փոքր կինոնկարներ, համընդհանուր ժառանգություն, փոքր կինոթատրոնների պահպանում, հասանելիություն և տարածում գլոբալ պլատֆորմներում» միջոցառման

| | | |
|---|---|---|
| 1 | Կազմակերպության անվանում | «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ |
| 2 | Կազմակերպության գտնվելու վայր | ՀՀ. ք. Երևան, Տերյան 3/ա |
| 3 | Ծրագրի անվանում | «Անրի Վեռնոյի (Աշոտ Մալաքյան, 1920-2002) 100-ամյակին նվիրված միջազգային համաժողով «Փոքր կինոնկարներ. համընդհանուր ժառանգություն, փոքր կինոթատրոնների պահպանում, հասանելիություն և տարածում գլոբալ պլատֆորմներում»: |
| 3.1 | Բովանդակություն | Եռօրյա գիտաժողովը կազմակերպվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2020-2021 թվականների օրացույցում ընդգրկված ֆրանսիահայ հայտնի կինոռեժիսոր Անրի Վեռնոյի 100-ամյա հոբելյանական միջոցառումների շրջանակում: Գիտաժողովը տևելու է 3 օր:<br><br>**Ժամանակացույց**<br><br>**Հոկտեմբերի 28** - Հյուրերի ժամանում Երևան<br><br>**Հոկտեմբերի 29** - Սփյուռքը և հայկական կինոյի ձևակերպման խնդիրները<br>10:30 - Հանդիպում Անի Գրանդ Հոթել հյուրանոցի դահլիճում<br>11:15 - Բացման խոսք (Շուշանիկ Միրզախանյան, Արա Խզմալյան, Վիգեն Գալստյան)<br>12:00 - Կարեն Ավետիսյան «Անրի Վերնոյի ոդիսականը» (հայերեն) |

| | | |
|---|---|---|
| | | 12:30 – Ընդմիջում<br>13:30 - Արբի Հովհաննիսյան (Ֆրանսիա, ռեժիսոր, կինոյի տեսաբան,) «Հայկական շարժարվեստի պատմություններ կազմելիս. խնդիրներ և մոտեցումներ» (անգլերեն)<br>14:30 - Մարիանա Պիսկովա (Բուլղարիա Հարավարևմտյան համալսարան, Բլագոնգրադ)<br>«Հայ էմիգրանտ Արշավիր Շախատունու մասին, ով 1928թ. Բուլղարիայում նկարահանեց ֆրանսիական «Անդրանիկ» ֆիլմը» (ռուսերեն)<br>15:00 – Ընդմիջում<br>15:15 - Հայկ Համբարձումյան (Ֆրանսիա, կինոգիտության թեկնածու, Սորբանի համալսարան) «Հայկական անցումը Երվանդ Ջանիկյանի և Անջելա Լուչիի ֆիլմերում և դրա մեսիական անդրադարձները» (անգլերեն)<br>15:45 - Դանիել Բըրդ (Ֆրանսիա/ Լեհաստան), անկախ կինոգետ, համադրող) «Կողմանկի ցուցադրություն դեպի անդունդ ընկած ճանապարհին. թե ինչու՞ պետք է Ստիվեն Սայադյանի ֆիլմերը ընդգրկված լինեն Յունեսկոյի համաշխարհային ժառանգության ցանկում» (անգլերեն),<br>16:20 - Արծվի Բախչինյան (Հայաստան, բանասիրական գիտ. թեկնածու) «Հայ կինոյի նախապատմության և սփյուռքահայ կինոյի պատմության նորագյուտ էջեր» (հայերեն)<br>17:00 – Ավարտ<br>19:00 - 22:30 Անրի Վերնոյի ֆիլմերի պաստառների ցուցադրության բացում և «Շաբաթավերջը Զյույդկոտում» ֆիլմի ցուցադրություն «Մոսկվա» կինոթատրոնում<br><br>**Հոկտեմբերի 30** - Վերընթերցելով խորհրդային կինոն և վերաիմաստավորելով հետխորհրդային կինոարխիվը<br>10:30 - Հանդիպում Անի Պլազա հյուրանոցում<br>11:00 - Վալերի Պոզներ (Ֆրանսիա, կինոգետ, Ռուսական, Կովկասյան և Կենտրոնական եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն)<br>«Համո Բեկ-Նազարյանի «Նամուսը», որպես հայ կինոյի կազմավորման բազմաշերտ քաղաքականության դրսևորում» (անգլերեն)<br>11:30 - Անրի Վարդանով (ԱՄՆ, կինոգիտության մագիստրոս)<br>«Չեղարկված քարավան, վերակառուցված ֆիլմ. բացահայտելով Համո Բեկ-Նազարյանի «Երկրորդ |

| | | |
|---|---|---|
| | | քարավանի» առեղծվածները» (անգլերեն)<br>12:00 - Վիգեն Գալստյան (Հայաստան, Հայաստանի ազգային կինոկենտրոնի կինոժառանգության բաժնի ղեկավար)<br>«Տեսնել ուրիշին. հայ կինոյի բազմամշակութային և հետգաղութային հետագծերի վերծանումը» (անգլերեն)<br>12:50 - Ընդմիջում<br>13:30 - Սոնա Կարապողոսյան (Հայաստան, կինոքննադատ)<br>«Հայ կինոյի միջազգայնացումը և փառատոնային քաղաքականության ձևավորումը 20-րդ դարի երկրորդ կեսին» (հայերեն)<br>14:30 - Հաննա Սթեյն (Ավստրիա, Գրացիի համալսարան)<br>«Ավելին, քան դիլետանտներ. Ինչո՞ւ է սիրողական կինո գործունեությունը և արտադրանքը կարևոր՝ որոշ օրինակներՀարասլավական կինոյի պատմությունից»<br><br>15:00 - Ջեյմս Շթեֆեն (ԱՄՆ, PhD, Էմորի համալսարան), «Թաքնված, բայց ոչ մոռացված. «Նռան գույնի» հիմնական մոնտաժում չօգտագործված տեսարաններն ու կադրերը» (անգլերեն)<br>15:30 - Սուսաննա Հարությունյան (Հայաստան, կինոգետ, Կինոքննադատների և կինոլրագրողների ասոցիացիայի նախագահ) «Հայկական կինոժառանգության ցուցակագրման առաջին մեթոդական փորձը» (հայերեն)<br>16:00 - Գարեգին Զաքոյան (Հայաստան, կինոյի պատմաբան)<br>«Ժառանգություն և ժառանգորդները. հայ կինոյի պատմության արխիվացման արդի խնդիրներ» (հայերեն)<br><br>16:30 - Ջասթին Վադել (Միացյալ Թագավորություն) «Պահպանելով և կիսելով «փոքրամասնական» կինոժառանգությունները» (անգլերեն)<br>17:00 – Ավարտ<br><br>**Հոկտեմբերի 31** - Պանելային քննարկումներ, հանդիպումներ<br>11:30 - Զրույց-հանդիպում Պատրիկ Մալաքյանի հետ, վարող՝ Կարեն Ավետիսյան)<br>12:30 - Սփյուռքյան կինոժառանգություն<br>բանախոսներ՝ Շագա Յուզբաշյան (Ֆրանսիա, կինոգետ), Արծվի Բախչինյան (Հայաստան, կինոյի պատմաբան), |

| | | |
|---|---|---|
| | | վարող՝ Վիգեն Գալստյան)<br>13:30 – Ընդմիջում<br>14:00 - Կինոժառանգության թվայնացում և վերականգնում. արդի խնդիրներ, բանախոսներ՝ Դանիել Բըրդ (Ֆրանսիա, կինոգետ, համադրող), Ջեյմս Սթեֆեն (ԱՄՆ, կինոգետ), Լուկաշ Չերանկա (Լեհաստան, «Ֆիքսաֆիլմ- Լեհաստան» կազմակերպության տնօրեն),<br>վարող՝ Մելիք Կարապետյան<br>15:00 - Խորհրդային ժառանգություն՝ ազգային կինոարխիվներ, բանախոսներ՝ Օլեքսանդր Տելյուկ (Ուկրաինա, Դովժենկո կենտրոնի համադրող),<br>վարող՝ Վիգեն Գալստյան<br>16:00 - Խորհրդային կինոժառանգության միջազգայնացում բանախոսներ՝ Ջասթին Վադել (Միացյալ Թագավորություն, «Կինոկլասիկա» հիմնադրամ),, Արբի Հովհաննիսյան Հովհաննիսյան (Ֆրանսիա,կինոյի պատմաբան), Սուսաննա Հարությունյան (Հայաստան, կինոգետ),<br>վարող՝ Մելիք Կարապետյան)<br>17:00 - Գիտաժողովի ավարտ |
| 3.2 | Նպատակ | Միջոցառումը կարևորվում է ֆրանսահայ անվանի կինոռեժիսոր Անրի Վերնոյի 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակում հարգանքի տուրք մատուցելու նրա հիշատակին, ներկայացնելու Վերնոյի ստեղծագործական ժառանգությունը, արժևորելու նրա տեղն ու դերը համաշխարհային կինոարվեստում և բացահայտելու ազգային ինքնության առանձնահատկությունը: Այն նպատակ ունի Հայաստանից և արտերկրից ներգրավելու խորհրդային, սոցիալիստական և սփյուռքի կինոժառանգության շուրջ քսան մասնագետների՝ կինոգետների, կինոքննադատների, հետազոտողների և կինոարդյունաբերության ոլորտի մասնագետների՝ ազգային և «փոքրամասնական» կինեմատոգրաֆի առանցքային հարցերի շուրջ միջդիսցիպլինար և քննադատական երկխոսության: Գիտաժողովի ավարտից հետո Կինոկենտրոնը նախատեսում է մեկուկես ամսվա ընթացքում հրապարակել ժողովածու, որտեղ կզետեղվեն ներկայացված բոլոր զեկույցները: |
| 3.3 | Անցկացման ժամկետ | 2021թ. հոկտեմբերից-դեկտեմբեր, բուն միջոցառումը՝ հոկտեմբերի 29-31-ը |

| | | |
|---|---|---|
| 3.4 | Անցկացման վայր | Երևան, Անի Գրանդ Հոթել հյուրանոց, Երևան, Հանրապետության 65 |
| 3.5 | Ակնկալվող արդյունքներ | ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2020-2021 թվականների օրացույցում ընդգրկված ֆրանսիահայ հայտնի կինոռեժիսոր Անրի Վերնոյի 100-ամյա հոբելյանի և նրա ստեղծագործական ժառանգության արժևորում: Օգտագործելով Անրի Վերնոյի ժառանգությունը և խորհրդային շրջանի «ազգային» կինեմատոգրաֆի հետագիծը որպես ելակետ, գիտաժողովը կանդրադառնա այս երկակի երևույթներին՝ որպես «փոքրամասնական» կինոյի դրսևորումներ, որոնք համաշխարհային կինոպատմության շրջանակներում կարիք ունեն նորովի մեկնաբանման: |
| 3.6 | Ոչ ֆինանսական ցուցանիշներ | Անրի Վերնոյի 100-ամյակին նվիրված գիտաժողովին մասնակցելու համար հրավիրված են կինոլորտի և ժառանգության պահպանման և արխիվացման մասնագետներ, կինոգետներ, հետազոտողներ՝ Անգլիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Ռուսաստանից, Վրաստանից և այլ երկրներից: Ներկա է լինելու նաև Անրի Վերնոյի որդին՝ կինոռեժիսոր, սցենարիստ Պատրիկ Մալաքյանը կնոջ հետ:<br>Այդ շրջանակներում նաև տեղի կունենա հատուկ հանդիպում-զրույց Անրի Վերնոյի որդու՝ Պատրիկ Մալաքյանի հետ, կկազմակերպվի Վերնոյի առավել նշանավոր ֆիլմերի կինոպաստառների ցուցադրություն և կներկայացվի նրա 1969թ. «Շաբաթավերջը Զյոյդկոտում» պատերազմի մասին պատմող ֆիլմը:<br>Հյուրեր և մասնակիցներ՝ մոտ 70<br>Հանդիսատես՝ 500 |